

ՍԱՐԳԻՍ ՄՆԱՅԱԿԱՆՅԱՆ

Իրավաբանական գիտությունների
թեկնածու

**ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ
ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԴՐԱ ԲՆՈՒԹԱԳՐԻՉՆԵՐԸ**

Հոդվածը նվիրված է սահմանադրական անվտանգության հասկացության էության, իրավական բովանդակության հիմնահարցերի ու առանձնահատկությունների լուսաբանմանը: Դիտարկվել է այդ հասկացության և պետական իրավական անվտանգության ու ազգային անվտանգության հարաբերակցության հիմնախնդիրները, վերլուծվել են դրանց առանձին բնութագրիչները, ինչպես նաև ուսումնասիրվել են դրանց առնչվող տեսական-իրավական բնույթի այլ հարցադրումներ:

Հիմնաբառեր- անվտանգություն, սահմանադրական անվտանգություն, ազգային անվտանգություն, իրավական անվտանգություն, իրավական բնութագրիչներ:

Քննարկելով «պետության սահմանադրական անվտանգություն» հասկացության էությունը և արդի պայմաններում դրա ապահովման հարցերը, պետք է անմիջապես նկատել, որ «սահմանադրական անվտանգություն» հասկացության միասնական մեկնաբանություն այսօր չկա: Գիտության մեջ առաջին անգամ այդ հասկացությունը ձևակերպվել է որպես «պետության սահմանադրական կարգի ամրապնդման և պաշտպանության, սահմանադրական օրենսդրության գործողության, պետական ինստիտուտների բարձր հեղինակության հիման վրա քաղաքական ռեժիմի համախմբման, ժողովրդավարության զարգացման, քաղաքացու իրավունքների և ազատությունների ապահովման նպատակով պետական, տեղական ինքնակառավարման մարմինների, ինչպես նաև իրենց իրավունքների և հնարավորությունների շրջանակում հասարակական կազմակերպությունների, իշխանության սուբյեկտների, պաշտոնատար և այլ իրավաբանական անձանց ու քաղաքացիների կողմից ձեռնարկվող միջոցառումների համակարգ»: Արտասահմանյան երկրներում նույնպես դեռևս միասնական մոտեցումներ չեն մշակվել քննարկվող կարգավիճակի վերաբերյալ:

Վերջին տարիներին արտասահմանյան երկրներում իրականացվող հետազոտություններում սահմանադրական անվտանգության հիմնախնդիրները դիտարկվում էին՝ ինչպես պետական անվտանգության ապահովման համատեքստում, այնպես էլ պետության ազգային անվտանգության և իրավական անվտանգության հարաբերակցության խորապատկերում (Ն.Վ.Ալեքսանդրով, Օ.Ա.Բելկով, Ն.Դ.Մատրուսով, Վ.Լ.Մանիլով, Վ.Վ.Մամոնով, Ա.Վ.Բազդեմիկով, Ս.Վ.Ստեպաշին, Ն.Ի.Ռիժակ, Տ.Է.Շուբերտ, Կ.Ռ.այսկ, Է.Դ.Նյուտոն, Ռ.Է.Հանտեր):

Հայրենական իրավագիտության բնագավառում անհրաժեշտ է կարևորել պրոֆեսոր Գ.Գ.Հարությունյանի այն դիտարկումը, որ՝ իրավական անվտանգության առանցքային խնդիրը երկրի սահմանադրական անվտանգության ապահովումն է: Ընդ որում, Սահմանադրության, իրավական համակարգի ու իրավակիրառ պրակտիկայի միջև հնարավոր հակասության հաղթահարման, ինչպես նաև մարդու և քաղաքացու սահմանադրորեն ամրագրված հիմնական իրավունքների անմիջական գործողության երաշխավորման վերաբերյալ իր մոտեցումների համատեքստում, պրոֆեսոր Գ. Հարությունյանը որպես սահմանադրականության հաստատման հրամայական, դիտարկեց սահմանադրական անվտանգության երաշխավորման այնպիսի սկզբունքներ, ինչպիսիք են.

- ա) սահմանադրական հավասարակշռության յուրաքանչյուր խախտման ժամանակին բացահայտումը, գնահատումը և հաղթահարումը,
- բ) Սահմանադրության գերակայության երաշխավորման համակարգի գործունակության ապահովումը,
- գ) մարդու սահմանադրական հիմնական իրավունքների անմիջական գործողության երաշխավորվածությունը,
- դ) իրավունքով իշխանության սահմանափակման սկզբունքի կարգախոսային բնույթի բացառումը²:

Միաժամանակ, պրոֆեսոր Ա.Խաչատրյանն իր հետազոտության շրջանակում սահմանադրական անվտանգությունը դիտարկեց ոչ որպես պետության անվտանգության մաս, այլ ընդհակառակը, այդ անվտանգության հիմքում նա առանձնացրեց մարդու և քաղաքացու իրավունքների և ազատությունների պաշտպանվածության վիճակը, երբ պետության սեփական անվտանգության նկատ

մամբ նույն պետության իրավապաշտպան գործունեությունն ունի առաջնահերթ ուղղվածություն³ :

Անհրաժեշտ է նաև նկատել, որ մասնագիտական գրականության մեջ ոչ բավարար չափով է հետազոտվել անվտանգության հասկացության մեխանիզմները: Ինչպես արդարացիորեն նշել է պրոֆեսոր Վ.Բատյուշենկովը, անվտանգության վերաբերյալ հարցը պայմանավորված չէ միայն ձևակերպումների քանակով, այլ նման սահմանումները ոչ ճշգրիտ են արտացոլում երևույթների էությունը, որոնք վերջին հաշվով ազդում են անվտանգության ապահովման համար մշակված ծրագրերի և դրանց իրացման վրա: Շարունակելով այդ միտքը, հեղինակը կարծում է, որ շրջանառվող տարբեր տերմինների՝ «պետական անվտանգության» և «ազգային անվտանգության» բովանդակությունն ու էությունը նույնականացվում են⁴ :

Ներկայացվածից հետևում է, որ պետության սահմանադրական անվտանգության բովանդակությունը բացահայտելու համար հարկավոր է այն դիտարկել պետության անվտանգություն համընդհանուր հասկացության սահմաններից դուրս, քանզի դրանք փոխկապակցված են որպես ընդհանուր և մասնակի հասկացություններ:

Այսպես, պետության անվտանգությունը համընդհանուր հասկացություն է և ունի հավաքական բնույթ: Դրա ապահովումը ենթադրում է բազմաթիվ, թեկուզ տարբեր, բայց փոխկապակցված խնդիրների լուծման անհրաժեշտություն պետության և հասարակության գործունեության բոլոր ոլորտներում, այդ թվում՝ միջազգային մակարդակում: Եվ դա օբյեկտիվ է, քանի որ պետության անվտանգության համար միշտ էլ գոյություն ունի արտաքին և ներքին հնարավոր վտանգի առաջացման սպառնալիք:

Բացի այդ, յուրաքանչյուր պետություն ժամանակակից աշխարհում մեկուսացված չի կարող գոյատևել: Այն հանդիսանում է տարբեր միջազգային ունիվերսալ և տարածաշրջանային կազմակերպությունների անդամ: Պետությունն ունի դաշնակիցներ, կնքում է տարբեր բնույթի միջազգային պայմանագրեր, իսկ դա նշանակում է, որ նա միշտ կարող է օգտագործել արդեն գոյություն ունեցող միջազգային կառուցակարգերը սեփական անվտանգության ապահովման համար այն պարագայում, եթե ծագեն ինչպես արտաքին, այնպես էլ ներքին սպառնալիքներ:

Միաժամանակ, պետության գոյության և զարգացման համար էական նշանակություն ունի տարածքային անվտանգությունը: Այսպես, մարդկային հասարակության ձգտումը դեպի անվտանգու-

թյուն՝ հանգեցրել է նրան, որ առաջացել է պետությունը, որի նպատակն ու նշանակությունն է ազգային միասնականության անվտանգությունը: Դեռևս XIX դարում Կ.Մարքսն է գրել, որ «անվտանգությունը դա քաղաքացիական հասարակության բարձրագույն սոցիալական հասկացություն է»⁵: Իսկ հունգարացի հայտնի գրող ու իրավաբան Ի.Էտվեշը նշել է, որ պետության գործունեության նպատակը դա ճանաչելն է «անվտանգությունը», որի իրականացմանը սպասում և պահանջում են պետության մաս կազմող քաղաքացիները⁶ :

Անգլիացի փիլիսոփա Թ.Գոբսոի կարծիքով «պետության նպատակը հիմնականում անվտանգության ապահովումն է, մարդկանց նպատակը և ստանձնած պարտավորությունների վերջնական պատճառը ինքնապահպանման ապահովումն է և բարեկեցիկ կյանքի ձգտումը»⁷ :

Նրա հետ համաձայնել է իրավունքի պրոֆեսոր Ա.Գրադովսկին, ըստ որի. «պետությունը, որը քաղաքացիներին ոչինչ չի տալիս՝ նույնիսկ անվտանգություն, անկասկած, սկզբում առաջացնում է անտարբերություն, հետո ժողովրդի թշնամանք, որը հանգեցնում է նրա քայքայմանն ու մահվանը՝ արտաքին թշնամու աջակցման կամ զանգվածային անտարբերության ու ներքին խժժության միջոցով»⁸ :

XIX դարի ռուս հեղափոխական գործիչ Պ.Պետտելը «Русская Правда» թերթում նշել է, «պետական բարեկեցությունը բաղկացած է երկու գլխավոր առարկաներից՝ անվտանգությունից և բարեկեցությունից: Դեկավարության առաջին նպատակը պետք է լինի անվտանգությունը... այն համապատասխանում է մարդու սկզբնական պարտականություններին⁹, որն ապահովում է կեցության պահպանումը»: Իսկ ռուս քաղաքական ու հասարակական գործիչ Մ.Սպերանսկին նշել է, որ «բոլոր օրենքների ընդհանուր առարկան մարդկանց վերաբերմունքի ձևավորումն է անձի և նրա գույքի ընդհանուր անվտանգության նկատմամբ, անձի և նրա գույքի անվտանգությունը դա հասարակության յուրաքանչյուր անդամի առաջնային և անբաժան պարտքն է»¹⁰ :

Ընդունելով անվտանգության պաշտպանության հարցի բացառիկ կարևորությունը, մեջբերված գիտնականների կարծիքները միավորում է այն, որ նրանք բոլորն այդ ինստիտուտը անբախտելիորեն կապում են պետության գործունեության հետ: Միայն այն կարող է ապահովել սեփական քաղաքացիների հանգիստը, բարենպաստ պայմաններ ստեղծելով նրանց կյանքի և գործունեության համար՝ հենվելով իր աշխատակազմի, իշխա-

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

նական համակարգերի վրա, որոնց լիազորությունները սահմանափակված և ամրագրված են համապատասխան իրավական ակտերով: Որևէ այլ սոցիալական ուժ չի կարող լուծել այդ խնդիրը:

Որպես մարդու և հասարակության նորմալ զարգացման կարևոր նախապայման պետության անվտանգության հասկացության տակ ընդհանուր առմամբ պետք է հասկանալ հասարակական հարաբերությունների որակյալ վիճակը՝ կոնկրետ պատմական և բնական պայմաններում մարդու և հասարակության բնականոն զարգացման պաշտպանվածությունը, ներքին և արտաքին հակադրության վտանգից՝:

Այսպիսով, կատարված վերլուծության արդյունքների հիման վրա անհրաժեշտ է կատարել հետևյալ եզրահանգումները.

1) սահմանադրական անվտանգությունը բազմատարր հասկացություն է, որը կազմում է պետական և ազգային անվտանգության մաս, մատնանշում սահմանադրական կարգի հիմքերի պաշտպանվածության ապահովման վիճակը և փաստացի կանխորոշում բոլոր այն տեսակի սոցիալական

հարաբերությունները, որոնք մտնում են պետության, հասարակության և մարդու գործառույթների ընթացակարգի մեջ,

2) սահմանադրական անվտանգության ապահովման համար ձեռնարկված միջոցները և հատկապես երկրի սահմանադրական կարգի դեմ ուղղված սպառնալիքի բնույթը, թույլ է տալիս նշել դրա «ներքին» ուղղվածության մասին, քանի որ պետական և ազգային անվտանգության ապահովման առանձնահատկությունները և այդ ուղղությամբ ձեռնարկվող միջոցառումները հիմնականում բնութագրվում են որպես արտաքին բնույթի սպառնալիքներ:

Հենց այս հիմնավորմամբ է պայմանավորված այն կարևոր չափորոշիչի առկայությունը, որը թույլ է տալիս տարանջատել և վերլուծել «անվտանգություն» կատեգորիան՝ վերը թվարկված հիմնարար բաղադրիչների շրջանակում:

¹ Տե՛ս, Шуберт Т. Э. Конституционная безопасность: понятие и угрозы // Право 2009. N4.

² Տե՛ս, Հարությունյան Գ.Գ. Երկրի իրավական անվտանգության երաշխավորումը ժողովրդավարության հաստատման կարևոր գրավական // <http://www.concourt.am/armenian/news/index.htm>

³ Տե՛ս, Хачатрян А.Г. Конституционная безопасность и вопросы конституционного контроля по защите прав и свобод граждан: закономерности и отклонения // ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի գիտակրթական միջազգային կենտրոնի գիտական տարեգիրք, 2017, էջ 39:

⁴ Տե՛ս, Баюшенков В.А. Конституционная ответственность в сфере обеспечения национальной безопасности России. Дисс. к.ю.н. М., 2005. С. 54.

⁵ Տե՛ս, Маркс К. К еврейскому вопросу// Маркс К., Энгельс Ф. Соч. 2, т. 1, С. 401.

⁶ Տե՛ս, Коркунов Н.М. Русское государственное право. С-ПБ., 1904, Т. 1. 56.

⁷ Տե՛ս, Гобс Т. Левиафан или материя, форма и власть государства церковного и гражданского// История политических и правовых учений. Белгород, 2009. С. 239.

⁸ Տե՛ս, Градовский А. Национальный вопрос в истории и литературе. С-ПБ., 1901, Т.6, С.31.

⁹ Տե՛ս, Пестель П. Русская правда // Избранные социально-политические и философские произведения декабристов., М., 1951, Т. 2, С. 110.

¹⁰ Տե՛ս, Сперанский М., План государственного преобразования графа М.М. Сперанского// Введение к уложению государственных законов 1809 г. М., 1905, С. 359.

¹¹ Տե՛ս, Степашин С.В. Безопасность человека и общества (политико-правовые вопросы): Монография.-СПБ. Санкт-Петербургский юридический институт МВД России, 2009. С. 6.

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑՄՆԿ

1. Հարությունյան Գ.Գ. Երկրի իրավական անվտանգության երաշխավորումը ժողովրդավարության հաստատման կարևոր գրավական // <http://www.concourt.am/armenian/news/index.htm>

2. Баюшенков В.А. Конституционная ответственность в сфере обеспечения национальной безопасности России. Дисс. к.ю.н. М., 2005.

3. Гобс Т. Левиафан или материя, форма и власть государства церковного и гражданского// История политических и

правовых учений. Белгород, 2009.

4. Градовский А. Национальный вопрос в истории и литературе. СПб., 1901, Т.6,
5. Коркунов Н.М. Русское государственное право. С-ПБ. 1904, Т. 1. 56.
6. Маркс К. К еврейскому вопросу// Маркс К., Энгельс Ф. Соч. 2, т. 1.
7. Пестель П. Русская правда // Избранные социально-политические и философские произведения декабристов., М., 1951, Т. 2.
8. Сперанский М. План государственного преобразования графа М.М. Сперанского// Введение к уложению государственных законов 1809 г. М., 1905.
9. Степашин С.В. Безопасность человека и общества (политико-правовые вопросы): Монография. -СПБ., 2009.
10. Хачагрян А.Г. Конституционная безопасность и вопросы конституционного контроля по защите прав и свобод граждан: закономерности и отклонения // ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի գիտակրթական միջազգային կենտրոնի գիտական տարեգիրք, 2017:
11. Шуберт Т. Э. Конституционная безопасность: понятие и угрозы // Право 2009:

Саргис Мнацакян
Кандидат юридических наук

РЕЗЮМЕ

Правовое содержание конституционной безопасности и его признаки

Статья посвящена сущности основных вопросов правового содержания и освещения характерных особенностей концепции конституционной безопасности. Была рассмотрена проблема соотношения этой концепции и государственной правовой безопасности и национальной безопасности, были проанализированы специфические/отдельные характеристики, а также были исследованы их теоретические и юридические аспекты относящиеся к другим вопросам.

Ключевые слова: *безопасность, конституционная безопасность, национальная безопасности, правовая безопасность, правовые характеристики.*

Sargis Mnatsakanyan
Candidate in Law

SUMMARY

Legal content of constitutional security and its components

The article is devoted to the gist, legal content issues and coverage of features of constitutional security concept. Correlation of the concept, state legal security and national security issues was observed, their specific characteristics were analyzed, as well as theoretical-legal and other related issues were studied.

Keywords: *security, constitutional security, national security, legal security, legal characteristics.*